ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Ա. Ղազումյան

«31» օգոստոսի 2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Լոռի մ.Վանաձոր

Վիկտոր Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոց

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

__Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմն. դպրոցի 9-րդ <Գ>

Հարությունյան Կարինե Հրաչիկի

« 2023-2024 » ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) ___9-րդ գ դասարանում սովորում են 30 աշակերտ՝ 19 տղա և 11 աղջիկ: Բոլոր աշակերտները ապահովված են դասագրքերով և անհրաժեշտ գրենական պիտույքներով: Դասարանը կարգապահ է ,կան ակտիվ աշակերտներ. որոնք մշտապես վերահսկողության տակ են և նրանց հետ տարվում է դաստիարակչական աշխատանք:Աշակերտները հարգում են մանկավարժներին , դասընկերներին և դրսևորում են օրինակելի վարք:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Աշակերներին իրազեկել իրենց պարտականությունների և իրավունքների մասին, ծանոթացնել դպրոցի ներքին կարգապահական կանոններին, բարձրացնել ուսուցման մակարդակը,կարգավորել աշակերտների վարքը, միջանձնային հարաբերությունները:Հատուկ հսկողություն սահմանել ոչ կարգապահ և դասերից հաճախ բացակայող աշակերտների նկատմամբ:

ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոգևոր դաստիարակություն : Աշակերտների հետ անցկացնել զրույցներ Քրիստոնեություն թեմայով, ծանոթացնել եկեղեցական տոներին, բացատրել ինչ է կրոնը, հավատքը,կարևորել եկեղեցու դերը մարդու կյանքում, զերծ պահել աշակերներին ընդգրկվելու աղանդավորական խմբերի:

Գեղագիտական դաստիարակություն _Այցելություն թանգարաններ,թատրոն, գեղագիտական կենտրոններ, աշակերտների մեջ սերմանել սեր դեպի մշակույթ,բացահայտելու մեր մշակութային արժեքները, ավելի տեղեկացված լինելու հայ մշակույթի ներկայացուցիչների մասին:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Ռազմահայրենասիրական թեմայով հաճախ անցկացնել զրույցներ և միջոցառումներ, լույս ընծայել պատի թերթեր, հանձնարարել կարդալ հայրենասիրության թեմայով գրված ստեղծագործություններ, նաև ստեղծագործել, գրել շարադրություններ, ռեֆերատներ, իմանալ հերոսների և նրանց կատարած սխրանքների մասին : Կազմակերպել այցելություններ հերոսների համար կառուցված հուշարձաններին և հարգել նրանց հիշատակը: Ռազմահայրենասիրական թեմայով գրված բանաստեղծություններ և երգեր սովորեցնել: Հատկապես ուշադրություն դարձնել տղաների ռազմահայրենասիրական դաստիարակության, սովորեցնել հայրենիքի բարձրագույն և վեհ արժեքները, ճիշտ և անմնացորդ սիրել հայրենիքը:

Սովորեցնել ճիշտ դասեր քաղել և գնահատել 2020 թվականի պատերազմը, սխալները, կորուստն ու արհավիրքը:

Իմանան մեր դպրոցի զոհված աշակերտների մասին, ուշադիր լինեն զոհվածների անկյունի նկատմամբ:

Ֆիզիկական դաստիարակություն : Հետևողական լինել աշակերտների ֆիզիկական դատիարակությանը և առողջ ապրելակերպին

Հետևել, որ աշակերտները չխուսափեն ֆիզկուլտուրայի դասերից, խրախուսել առողջ ապրլակերպով զբաղվելը, անցկացնել զրույցներ «Սպորտը մեր կյանքում», « Առողջ դաստիարակություն» և այլ վերնգրերով, կազմակերպել սպորտային խաղեր և մրցույթներ՝ օրինակ ունենալով դպրոցի հաղթանակը համահայկկան մրցույթում:Աշակերտներին իրազեկել առաջին բուժօգնության մասին, առողջ ապրելակերպի, ֆիզիկական վարժանքների կարևորության մասին:

Աշխատանքային դաստիարակություն : Աշակերտների մեջ սերմանել աշխատասիրություն, հետևել շրջապատի և դասասենյակի մաքրությանը և սեփական հիգիենային, սահմանել հերթապահություն՝ պահպանելով կանոնները, գրել շարադրություններ և անցկացնել զրույցներ «Աշխատանքն է գեղեցկացնում մարդուն» , «Աշխատանքի ուժը» և այլ վերնագրերով: Ուշադիր լինեն դասարանի և դպրոցի գույքի հանդեպ, վերանորոգեն, պատրաստեն ձեռքի աշխատանքներ, ակտիվորեն մասնակցեն շաբաթօրյակներին:

Վարել զրույց աշխատանք թեմայով, աշակերտներին հոգեբանորեն նախապատրաստել աշխատանքին, բացատրել աշխատանքի կարևորությունը:

Բնապահպանական դաստիարակություն :Զրույցներ բնության մասին, ծառահատումների, ջրերի աղտոտման, կենդանիների և թռչունների վերացման խնդիրների մասին:

Սեռական դաստիարակություն: Վարել զրույցներ ,քննարկումներ անցկացնել, թեմային առնչվող տեղեկություններ տալ աշակերտներին:Նպատակը՝ հեռու պահել երեխաներին անտեղյակության պատճառով սխալ գործելուց:

Դպրոց –ընտանիք կապը_Ծնողների հետ սերտ կապի մեջ լինելով բացահայտել աշակերտների թերությունները և համատեղ ուժերով շտկել խնդիրները,ծնողին ներգրավել ուսուցման և դաստիարակության աշխատանքներին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթները	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը		Կատարողներ
1	Գիտելիքի օր, զրույց	սեպտեմբեր	
2	Վիկտոր Համբարձումյանի կյանքն ու գործնեությունը	սեպտեմբեր	
3	Պատմական ակնարկ Հայաստանի մասին:	սեպտեմբեր	
4	Ուսուցիչը մեր կյանքում	սեպտեմբեր	
5	Հայկական ավանդույթները,որոնցով հպարտանում ենք:	հոկտեմբեր	
6	Ընտանիք և պարտականություն:	հոկտեմբեր	
7	Բարոյականություն և իրավունք:	հոկտեմբեր	
8	Իմ իրավունքները:	նոյեմբեր	
9	Ով է պատասխանատու իմ իրավունքների համար:	նոյեմբեր	
10	Ուզում եմ ունենալ պետություն,որտեղ…	նոյեմբեր	
11	Իմ հայրենիքի պատմության էջերը:	նոյեմբեր	
12	Քաղաքացիություն:	նոյեմբեր	
13	Ամանոր և Սուրբ ծնունդ	դեկտեմբեր	
14	Հայոց բանակ	դեկտեմբեր	
15	Արդար, ազնիվ և օրինապահ:	դեկտեմբեր	
16	Երբ աշխատանքը միայն ուրախություն է:	հունվար	
17	Ում եմ համարում գեղեցիկ մարդ:	հունվար	
18	Հայտնի հայ մարզիկները:	հունվար	
19	Ուժեղ լինել,նշանակում է…	փետրվար	
20	Ում կուզեի նմանվել:	փետրվար	
21	Ինչպես հասկանալ մարդկանց:	փետրվար	
22	Ինչպես պահպանելԵրկիր մոլորակը:	փետրվար	
23	Պահպանենք մեր շրջակա միջավայրը:	մարտ	
24	Պատերազմ տեսած մանուկները:	մարտ	
25	Արցախյան պատերազմի հետևանքները:	մարտ	
26	Անհատի բարեկրթությունը:	մարտ	
27	Ինչ գեղեցիկ է աշխարհը:	ապրիլ	
28	Եթե ես կարողանայի…	ապրիլ	

29	Ինչ է ընկերությունը և բարեկամությունը:	ապրիլ	
30	Իմ լավագույն ընկերը:	ապրիլ	
31	Իմ հետաքրքությունները և նախասիրութը ունները:	մայիս	
32	Ում եմ ես վստահում:	մայիս	
33	Իմ կարդացած գրքի որ հերոսն է տպավորվել իմ մեջ:	մայիս	
34	Հետաքրքրությունը լավ հատկանիշ է թե վատ:	մայիս	